

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2024թ հոկտեմբերի 31-ի թիվ 109-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ
ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ.....	3
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ.....	5
3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	6
4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	7
5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ.....	8
6. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	14
7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.....	15

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը¹

Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննության առաջադրանքը» հաստատելու մասին թիվ 76-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն, պետական բյուջեի կատարման կազմակերպում:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների

¹ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

Ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և հայաստանի հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի N 324-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 254-Ն հրաման և այլն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2024 թվականի հուլիսի 25-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը²

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Առուստամյանը:

² «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Նախարարության 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությամբ արձանագրված՝ Նախարարության կողմից վերահսկվող՝ պետությանը պատկանող ակտիվների և պարտավորությունների, ներառյալ ՀՀ պետական պարտքի գծով գործարքների և գործառնությունների ՀՀՀՀՀՀՍ³-ին համապատասխան հաշվապահական հաշվառում չի վարվել նաև հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում:

Որպես վերոգրյալ փաստի հետևանքային դրսևորում արձանագրվել է, որ պետական պարտատոմսերի հետգնման գործարքի արդյունքում, պետությունը չունենալով հետգնման ծավալի չափով պարտատոմսերի սպասարկման պարտավորություն և դրանով պայմանավորված փաստացի վճարում կատարած չլինելու պարագայում, գանձապետարանում Նախարարության անվամբ վարվող հաշիվներով, առանց իրավական հիմքերի, 238,081.66 հազար դրամի չափով դրամարկղային գործառնություններ են ձևակերպվել՝ բյուջետային հաշվետվության մեջ իրական պատկերն արտացոլելու նպատակով: Արդյունքում, թեպետ՝ հաշվետվության մեջ արտացոլվել են պարտատոմսերի սպասարկման նպատակով փաստացի վճարված տոկոսային ծախսերը, սակայն չեն պահպանվել բյուջետային հաշվետվություններին ներկայացվող պահանջները, քանի որ պետական պարտքին վերաբերող գործառնությունները սահմանված կարգով չեն հաշվառվում Նախարարության հաշվապահական հաշվառման համակարգում:

Մանրամասները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 5-րդ բաժնի 1-ին կետում:

³ «Հանրային հարվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության հանրային հարվածի հաշվապահական հաշվառման սրանդարտ:

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ⁴

Հաշվեքննության ընթացքում հասանելի էլեկտրոնային հարթակներից ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանության մանրամասն նկարագիրը, դրա վերաբերյալ Նախարարության դիրքորոշումը և այդ կապակցությամբ հաշվեքննողների արձագանքը ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 5-րդ բաժնում:

Խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Հետհսկողական գործընթացի շրջանակում նախորդ՝ 2023 թվականի տարեկան և 2024 թվականի երեք ամիսների պետական բյուջեների կատարման, պետական բյուջեների կատարման կազմակերպման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ, ընթացիկ եզրակացություններում արձանագրված առանձին անհամապատասխանություններ չեն վերացվել, և դրանով պայմանավորված՝ արդիական են նաև տրված առաջարկները: Մանրամասները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 6-րդ բաժնում:

⁴ Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ասպարույցներ, որոնց կուրակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի փարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ փարեկան հաշվեքննությունը, բոլոր էական առումներով, ներկայացնում է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարության, որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների պլանով նախատեսվել է 170,958,621.80 հազար դրամի ծախս, ճշտված պլանը կազմել է 172,366,410.57 հազար դրամ, ֆինանսավորումը՝ 157,324,085.75 հազար դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 157,312,475.13 հազար դրամ, փաստացի ծախսը՝ 157,490,488.52 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 91.30%, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների ցուցանիշներ

հազար դրամ

Ծրագիր	Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
ԸՆԴԱՄԵՆԸ	170,958,621.80	172,366,410.57	157,312,475.13	157,490,488.52
1006 Պետական պարտքի կառավարում	167,583,693.90	167,404,693.90	153,491,627.37	153,491,627.37
1015 Սոցիալական փաթեթների ապահովում	-	9,600.00	9,144.00	11,028.00
1031 Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	14,850.00	14,850.00	-	-
1108 Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	3,298,896.10	4,876,084.87	3,760,546.96	3,936,676.35
1137 Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում	59,650.00	59,650.00	49,625.00	49,625.00
1205 Սոցիալական ապահովություն	1,531.80	1,531.80	1,531.80	1,531.80

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի⁵ հավելված N 2-ի 7-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ձև Հ-2 հաշվետվության (այսուհետ՝ Ձև Հ-2 հաշվետվության) «Լրացման պահանջներ» բաժնի 8-րդ կետի պահանջի հետ:

Համաձայն Ձև Հ-2 հաշվետվության «Լրացման պահանջներ» բաժնի 8-րդ կետի՝ «ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի թիվ 706-Ն որոշման 31-րդ և 48-րդ կետերում նախատեսված դեպքերում ծրագրի պատասխանատու մարմնի գանձապետական հաշվից ելքագրված գումարները համարվում են տվյալ միջոցառումների գծով ֆինանսավորում և դրամարկղային ծախսեր»:

ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշման հավելվածի 31-րդ կետի համաձայն «...Տվյալ տարվա «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական պարտքի մարման և սպասարկման, տոկոսավճարների համար նախատեսված համապատասխան ծրագրերի միջոցներից գանձապետարանը գումարները փոխանցում է ուղղակի վճարման միջոցով, ԲԳԿ-ի կողմից պատրաստված վճարային փաստաթղթերի հիման վրա՝ ստացողների կողմից նշված հաշվեհամարներին փոխանցման եղանակով:...»:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE) համակարգում գանձապետական 900001237776 հաշվից 1006-13001 «Կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման իրականացման շրջանակում 441100 «Ներքին արժեթղթերի տոկոսավճարներ» հոդվածով, հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում, դրամական արտահոսքերի հանրագումարը կազմել է 106,964,584.04 հազար դրամ,

⁵ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի N 324-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 254-Ն հրաման:

որից 238,081.66 հազար դրամը, ըստ էության, հանդիսանում է հետվերադարձ Նախարարության «Պետական ընդհանուր ռեսուրսներ» հաշվին:

Նախարարության նույն ժամանակաշրջանի Հ-2 հաշվետվությամբ «Դրամարկղային ծախս» և «Ֆինանսավորում» ցուցանիշներն արտացոլվել են յուրաքանչյուրը՝ 106,488,420.72 հազար դրամ կամ դրամական հոսքերի վերը նշված հանրագումարից՝ 238,081.66 հազար դրամի չափով պակաս՝ հաշվի առած նաև հետվերադարձը (106,964,584.04 -238,081.66-238,081.66):

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային (LSFINANCE) համակարգի վերը նշված հաշվից դրամական արտահոսքերի՝ 106,964,584.04 հազար դրամ հանրագումարում ներառված է 238,081.66 հազար դրամի գործառնություն, որի իրավական հիմքը բացակայում է: Վերոնշյալ իրավական ակտերի համաձայն տվյալ հաշվով դրամական արտահոսքերը հաշվառվում են բացառապես վճարային փաստաթղթերի հիման վրա ստացողների հաշվեհամարներին ուղղակի վճարման միջոցով կատարված փոխանցումները, մինչդեռ տվյալ դեպքում՝ պարտատոմսերի հետգնման արդյունքում չկրած տոկոսային ծախսերը տվյալ ձևակերպմամբ հետ են վերադարձվել Նախարարության «Պետական ընդհանուր ռեսուրսներ» հաշվին և ըստ այդմ՝ չհանդիսանալով դրամական հոսքեր չեն արտացոլվել Հ-2 հաշվետվության մեջ:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվապահական հաշվառման մոտեցումները (ճանաչում, չափում, ապաճանաչում), ինչպես նաև դրանց նկատմամբ կիրառվող բացահայտումները սահմանված են Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ) «Ֆինանսական գործիքներ» բաժին 19-ում: Նախարարության կողմից իրականացվող, ներառյալ վերոշարադրյալ գործառնությունների, դրանց վրա ազդող այլ դեպքերի և իրադարձությունների ՀՀՀՀՍ-ին համապատասխան հաշվապահական հաշվառումը կարգավորվում է Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և դրա կիրառման հրահանգով: Օրինակ, մեկ տարուց ավել մարման ժամկետ ունեցող երկարաժամկետ պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարների (տոկոսների և հիմնական գումարի գծով բոլոր վճարումների անվանական (չգեղջված) արժեքը) առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, ներառյալ դրանց հետգնման և այդ դեպքում չկրած տոկոսային ծախսերի հաշվառման համար հաշվային պլանով նախատեսված է 412 «Երկարաժամկետ պարտատոմսերի գծով վճարվելիք համախառն գումարներ» հաշիվը, որին կից բացված երկրորդ կարգի հաշիվները,

թողարկված երկարաժամկետ պարտատոմսերի՝ ըստ ներքին և արտաքին դասակարգման հաշվառման համար ունեն նաև ենթաանալիտիկ հաշիվներ: Ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով չկրած տոկոսային ծախսերի (ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով վճարվելիք համախառն գումարների և դրանց գեղչված արժեքի կամ սկզբնապես ճանաչված հաշվեկշռային արժեքի տարբերությունը) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար նախատեսված է 418 «Չկրած տոկոսային ծախսեր երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով» հաշիվը՝ դրան կից բացված երկրորդ կարգի հաշիվները, որոնք այդ ծախսերի առանձնացված հաշվառման համար ունեն նաև ենթաանալիտիկ հաշիվներ և այլն:

1006-13001 «Կառավարության պարտքի սպասարկում» միջոցառման «441100-Ներքին արժեթղթերի տոկոսավճարներ» հոդվածով գործառնությունները չեն հաշվառվել Նախարարության հաշվապահական հաշվառման համակարգում⁶ և չեն պահպանվել բյուջետային հաշվետվություններին ներկայացվող պահանջները:

Նախարարության առարկությունը և բացատրությունը:

Ստանդարտի 2.25-րդ պարագրաֆի համաձայն՝ պարտավորությունները կազմակերպության ներկա պարտականություններն են՝ որպես կատարված (անցյալ) գործառնությունների (դեպքերի) արդյունք, որոնց մարումով ակնկալվում է, որ կհանգեցնի կազմակերպությունից տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսքի: Ընդ որում, Ստանդարտի 2.29-րդ պարագրաֆի համաձայն՝ պարտավորության որոշիչ բնութագրերից է այն, որ կազմակերպությունն ունի որոշակի ձևով գործելու կամ կատարելու ներկա պարտականություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պետական պարտքի՝ այդ թվում վերջինիս մաս կազմող պետական գանձապետական պարտատոմսերի գծով ՀՀ ֆինանսների նախարարությունը չունի ներկա պարտականություն, իսկ դրանց մարումը չի հանգեցնի ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսքի՝ ՀՀ պետական պարտքը՝ այդ թվում վերջինիս մաս կազմող պետական գանձապետական պարտատոմսերը և դրանց հետ կապված գործառնությունները չպետք է ճանաչվեն ՀՀ ֆինանսների նախարարության առանձին ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվեքննողի մեկնաբանությունը:

Նախարարության դիրքորոշումը չի բխում Ստանդարտի, իր իսկ կողմից մատնանշված, պարագրաֆներով սահմանված պահանջներից: Մասնավորապես.

- Ստանդարտի 2.29 պարագրաֆի համաձայն.

⁶ Արձանագրվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ. հրապարակված է Հաշվեքննիչ պալատի armsai.am պաշտոնական կայքում, «Փաստաթղթեր» բաժնում:

«Պարտավորության որոշիչ բնութագրերից է այն, որ կազմակերպությունն ունի որոշակի ձևով գործելու կամ կատարելու ներկա պարտականություն: Պարտականությունը կարող է լինել կամ իրավական կամ կառուցողական: Իրավական պարտականությունը իրավաբանորեն ենթակա է անվերապահ կատարման՝ որպես պարտավորեցնող պայմանագրի հետևանք կամ օրենսդրական պահանջ: Կառուցողական պարտականությունը պարտականություն է, որը բխում է կազմակերպության գործողություններից, երբ՝

1) անցյալի փորձով, հրապարակված քաղաքականությամբ կամ բավականաչափ որոշակի ընթացիկ հայտարարությամբ կազմակերպությունն այլ կողմերին ցույց է տվել, որ ստանձնելու է որոշակի պարտականություններ,

2) որպես արդյունք՝ կազմակերպությունը այդ կողմերից մի մասի շրջանում ստեղծել է հիմնավորված ակնկալիք, որ կատարելու է նշված պարտականությունները»:

- «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածով սահմանված՝ Նախարարությանը վերապահված հիմնական գործունեության ոլորտներից է նաև պետական պարտքի կառավարումը:

- Նախարարության Կանոնադրության 11-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն «Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով» պետական պարտքի կառավարման ոլորտում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

«ա. կառավարության պարտքի կառավարման ռազմավարության մշակումը և մշտադիտարկումը,

բ. փոխառությունների տարեկան ծրագրի կազմումը և իրականացումը,

գ. պետական պարտքի հաշվառումը և սպասարկումը,

դ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կանխիկ հոսքերի կանխատեսումը և կառավարումը,

ե. պետական գանձապետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի կազմակերպումը».

- Նախարարության և Կենտրոնական բանկի միջև 2017 թվականի ապրիլի 25-ին կնքված «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերի պահառության, տեղաբաշխման ու հետգնման վեջնահաշվարկի, մարման սպասարկման իրականացման և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» թիվ 20/250417-1 պայմանագրով պարտատոմսերի թողարկողը ՀՀ ֆինանսների նախարարությունն է:

Ըստ այդմ, «ՀՀ պետական պարտքի՝ այդ թվում վերջինիս մաս կազմող պետական գանձապետական պարտատոմսերի գծով ՀՀ ֆինանսների նախարարությունն» ունի օրենսդրությամբ սահմանված և դրա հիման վրա կնքված պայմանագրով ստանձնած ներկա պարտականություն:

Ավելին, տվյալ դեպքում աներկբա է նաև Նախարարության կառուցողական պարտականությունը, քանի որ Ստանդարտով սահմանված՝ անցյալի փորձով, հրապարակված քաղաքականությամբ Նախարարությունն այլ կողմերին ցույց է տվել, որ ստանձնելու է պետական պարտքի գծով որոշակի պարտականություններ և ստեղծել է հիմնավորված ակնկալիք, որ կատարելու է նշված պարտականությունները:

Օրենսդրական կարգավորումներից չի բխում նաև Նախարարության դիրքորոշումն առ այն, որ թողարկված պարտատոմսերի «... մարումը չի հանգեցնի ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսքի՝ ՀՀ պետական պարտքը՝ այդ թվում վերջինիս մաս կազմող պետական գանձապետական պարտատոմսերը և դրանց հետ կապված

գործառնությունները չպետք է ճանաչվեն «Ֆինանսների նախարարության առանձին ֆինանսական հաշվետվություններում»:

Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան հանրային հատվածի կազմակերպությունները պարտավոր են վարել ոչ միայն իրենց ամրակցված գույքի և դրանց գծով ստանձնվող պարտավորությունների, այլ նաև օրենսդրությամբ իրենց կողմից վերահսկվող՝ պետությանը պատկանող ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվառումը: Ըստ այդմ, թե ՀՀՀՀՍ-ով և թե հաշվային պլանով, դրա կիրառման հրահանգով, ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթով և լրացման ցուցումներով սահմանված են համապատասխան պահանջներ, հաշվապահական հաշվառման հաշիվներ, հաշվետվություններում արտացոլվող տվյալներ (ցուցանիշներ), ներառյալ պետական պարտքի, այդ թվում վերջինիս մաս կազմող պետական գանձապետական պարտատոմսերի գծով: Այդ մասին Հաշվեքննիչ պալատի հիմնավորումները ներկայացված են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության հավելվածում, որը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքի «Փաստաթղթեր» բաժնի «Ընթացիկ եզրակացություններ» ենթաբաժնում (<https://armsai.am/hy/current-conclusions>):

2. Առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների հետ⁷:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի

- 2-րդ մասի՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձինք:

- 3-րդ մասի՝ կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

Նախարարությունում չի ապահովվել ներքին աուդիտի համակարգի առկայությունը:

Նախարարության առարկությունը և բացատրությունը:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի մեկնաբանման տեսակետից որևէ խնդիր առկա չէ, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարն ապահովել է ներքին աուդիտի ստորաբաժանման առկայությունը, սակայն ստորաբաժանման պետի թափուր պաշտոնը մրցութային կարգով համալրելու նպատակով կազմակերպված թվով երեք գործընթացների

⁷ Նշված անհամապատասխանությունն արձանագրվել է Ֆինանսների նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննությամբ, որի արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի armsai.am պաշտոնական կայքում, «Փաստաթղթեր» բաժնում:

արդյունքում (մրցույթներն իրականացվել են ս.թ.-ին)՝ մասնակիցների կողմից թեստավորման և/կամ հարցազրույցի փուլերը չհաղթահարելու պատճառով նշված պաշտոնը չի համալրվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը մոտ ապագայում պատրաստվում է կազմակերպել ներքին աուդիտի ստորաբաժանման պետի թափուր պաշտոնը մրցութային կարգով համալրելու թվով չորրորդ գործընթացը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը»: Նույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ներքին աուդիտի համակարգը՝ ներքին աուդիտի իրականացման նպատակով օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, ինչը Նախարարության կողմից չի ապահովվել:

6. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հետհսկողական գործընթացի շրջանակում հարկ է նշել, որ նախորդ՝ 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման և 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման, պետական բյուջեի կատարման կազմակերպման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ, ընթացիկ եզրակացություններում արձանագրված առանձին անհամապատասխանություններ չեն վերացվել, և դրանով պայմանավորված՝ արդիական են նաև ձևակերպված առաջարկները:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ելնելով ընթացիկ հաշվեքննության արդյունքներից և նկատի ունենալով նախորդ՝ 2023 թվականի պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությամբ արձանագրված խնդիրների լուծված չլինելու հանգամանքը, Նախարարությանն առաջարկվում է.

- 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությամբ ներկայացված առաջարկությունների (<https://armsai.am/hy/current-conclusions>) իրագործման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիր՝ յուրաքանչյուր միջոցառման համար սահմանելով պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

ԿԱՐԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ



Հաշվեքննիչ պալատի անդամ

31 Հոկտեմբերի 2024 թվական

Հաշվեքննիչ պալատ

Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն